ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

18 հունիսի 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արման Նալբանդյանը, Վեներա Վարոսյանը, Լիլիթ Գասպարյանը, Թադեվոս Պողոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Համլետ Ավետիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 18-ի թիվ 6 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին կից զբոսաշրջային խորհրդի կազմը հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողեր նպատակայնին նշանակության և գյուղատնտեսական նշանակության հողերից մրցույթային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու, մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի N 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և

լրացումներ կատարելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի երկրորդ գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կ. Մանուկյան/:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներ դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի ««Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 2-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 7-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-

րդ կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին կից զբոսաշրջային խորհուրդը հետևյալ կազմով՝

Խորհրդի նախագահ՝	Կարեն Մանուկյան /համայնքի ղեկավար/,
Խորհրդի քարտուղար՝	Համլետ Ավետիսյան /աշխատակազմի քարտուղար/,
Խորհրդի անդամներ՝	Թինա Մելքոնյան /ավագանու անդամ/,
	Թադևոս Պողոսյան /քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի երկրոդ կարգի մասնագետ/,
	Լիլիթ Գասպարյան /աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար/,
	Տիգրան Պետրոսյան /«Հյուսիս արկածային ակումբ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն/,
	Անուշ Խաչատրյան /«Կոմպաս» հասարակական կազմակերպությանփորձագետ/:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅՆԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 481-րդ հոդվածի 4-րդ, 7-րդ և 8-րդ մասերով, 76-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 81-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականություն հանդիսացող, սույն որոշման հավելվածում նշված բնակավայրերի հողեր նպատակային նշանակության և գյուղատնտեսական նշանակության հողակտորների մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հայտարարել մրցույթ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավար Կարեն Մանուկյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով կազմակերպել և անցկացնել սույն որոշման

հավելվածում նշված հողամասերի մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մրցույթը:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 104-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 104-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) «Համայքի բյուջեի եկամուտները» հատված 1-ում՝

ա. Հոդված 7331, 1255 տողում «7692.0» թիվը փոխարինել «0» թվով,

բ. Հոդված 7452, 1393 տողում «300.0» թիվը փոխարինել «7992.0» թվով:

2) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման» հատված 2-ում՝

ա. Բաժին 1, խումբ 6, դաս 1, 2161 տողում «116100.0» թիվը փոխարինել «116778.7» թվով:

3) «Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման» հատված 3-ում՝

ա. Հոդված 5122, 5122 տողում «3000.0» թիվը փոխարինել «3678.7» թվով:

4) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ հատված 4-ում՝

ա. 7000 տողում «362504.2» թիվը փոխարինել «363182.9» թվով:

5) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները» հատված 5-ում՝

ա. 8198 տողում լրացնել «75310.3» թիվը փոխարինել «75989.0» թվով:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու կանոնակարգի 130-րդ և 135-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի երկրորդ գումարման նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 9-ը՝ ժամը՝ 15:00:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՄԱՐԳԱՐԻՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԳԵՂԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՄԱՐՏՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԷԼՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ՇԱԲՈՅԱՆ
ՁՈՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԻԱՆՆԱ ՀԱՅԿՅԱՆ
ՀՐԱՆՏԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ
ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԹԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՄՀԵՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀԵՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մելքումյանը _____